



«Զի՞ խնդրէ՛ք զկենդանին ընդ մեռեալս. չէ աստ, այլ յարեալս:»

ՕՐՀՆԵՄ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆԴ ՌՎ ՏԷՐ

Սրբանց կ'օրհնեմ իեզ ոյ Յիսուս
Որ տրիր փրկութիւն հոգւոյս,
Զի սուրբ արիւնովդ մաքրուեցայ
Եւ մեղիւրէս ազատուեցայ:

Անհուն սիրովդ ի Դողգոքս
Թափեցիր արիւնդ խաչին վրայ,
Հէ՛կ ու թշուառ մահապարսիս,
Սուրբ յարուրեամբդ յարուցիր զիս,

Հարկէ ինձի, ես ալ մեռնիմ
Անճառ սիրոյդ համար Տէ՛ր իմ,
Շնորհէ ինձ յոյս, հաստի ու սէր
Որ օրհնեմ յարութիւնդ ո՛վ Տէր:

Արդ յարութիւնդ օրհնեալ ըլլայ
Կերգեմ իեզ միշտ աշխուեա,
Թափէ օրհնութիւնդ իմ վրայ
Որ սուրբ Զատիկի ինձ քարի գայ:

Կ'ուզեմ հրոյակել սուրբ անունդ
Եւ պատուել մահդ ու յարութիւնդ,
Տուր. զօրութիւն անկարողիս
Արհայտութիւնն՝ յէս վախճանիս:

Անարժան ծառայ Յիսուսի
ձիւր էլ Շուղուր՝ ՍԱՀԱԿ Կ. ՇԱՆԼԵԱՆ

ՀՈԳԵՒՈՐ ՀԱՐՑ ԵՒ ՊԱՏԱՍԻԱՆ (Սաղմ. 119:18)

Հարց.— Իմ ճիւղ վիճակս ի՞նչ է Աստուծոյ առջեւ:

Պատ.— Կարգա՛ (Հռ. 3:10, 23. Մարթ. 8:30 Յովհ. 3:36. Յայտ. 20:15
Դործք. 4:12. Եբր. 2:3)

Հարց.— Ի՞նչ բնեմ որ փրկուիմ:

Պատ.— Կարգա՛ (Դործք. 3:19. 16:31. 5:24. 6:47, 37. Եփես. 2:8)

Հարց.— Ինչե՞ն գիտեմ որ մեղքերս ներուած են:

Պատ.— Կարգա՛ (Ա. Յով. 1:9. Հռ. 6:23. Դործք. 13:38 39. Ես. 1:18)

Հարց.— Ինչե՞ն գիտեմ որ Աստուծոյ զաւակ եղած եմ:

Պատ.— Կարգա՛ (Յով. 1:12, Ա. Յովհ. 5:1 Հռ. 8:14, Ա. Յովհ. 5:13.
Յովհ. 10:28. 15:14): Պայմանով խրատ մը (Յովհ. 13:17):

ՍԲ. ԳՐԲԻՆ ՏՈՒԱԾ ԼՈՅՍԵՐԸ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Մէկը պիտի կորսուի, բայց ո՞վ.— Տե՛ս (Յովհ. 8:21, 24):
2. » » փրկուի, » » » (Հռ. 10:13):
3. » » յաւիտենական կեանք ունի բայց ո՞վ.— Տե՛ս (Յովհ. 3:36):
4. Ան որ յաւիտենական կեանք ունի նորէն ծնած է, ո՞վ է. Տե՛ս (Յովհ. 1:12):
5. Անոնք որ նորէն ծնած են պահուած են. բայց, ո՞ւր, Տե՛ս (Յովհ. 10:29):

Պրուէլին, Նիւ Եօրֆ

Եղբ. ԴԷՈՐԴ ՃԻԶՄԷՃԵԱՆ



ԱՎԵԾԱՐԱՆԻ ԶԱՅՆ

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. SARIAN

Արքեպիսկոպոս Խ. Թ. ՍԱՐԳՍՆ

Խմբագիրներ՝ Խ. Թ. ՍԱՐԳՍՆ և Կ. Թ. ՍԱՐԳՍՆ

Ա. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 1939

ԹԻԻ 4

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՅԱԶԹԱՆԱԿԸ

«Ամենայն ինչ կատարեալ է, եւ խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին»: Եւ հոս կը վերջացնէ ՚րնան Քրիստոսի կեանքն ու գործքը: Ըստ իրեն եւ իր համախոսներուն՝ մահը Քրիստոսի կեանքին վերջակէտն էր:

Ան ողբակիցուած էր ճշմարտութեան սեղանին վրայ որպէս նահատակ մը:

Եթէ այդպէս էր, այդ կը նշանակէր՝ թէ Անոր հետ մեռան նաեւ քարութիւնը, արդարութիւնն ու սրբութիւնը, զորս կը մարմնացնէր իր անձին վրայ: Եթէ Քրիստոս մեռած է եւ մնացած այդպէս մեռեալ, մեռած է իր Աստուածային մեծութեամբն ու անսահմանութեամբը: Ասիկա հակասութիւն մըն է, նաեւ ահաւոր խորհուրդ մը զժողովաշունչ: Այդ պարագային ինչո՞ւ չմտածել թէ Սատանան է տէրն երկրի ու երկրի, եւ մահը՝ յաւիտենական յաղթականը: Այդ պարագային, «Կերիցուք, արքցուք, քանզի վաղիւ մեռանիմք» լաւագոյն նշանաբանն է մարդկային գեղին, որովհետեւ ամէն ինչ հոս է, եւ հոս կը վերջանայ: Բայց ոչ, մարդուն մէջ ամէն ինչ կ'ընդգծի այսօրինակ անբարոյ եւ սխալ տեսիլն զէմ: Քրիստոս մեռաւ, բայց յարեաւ եւ մեզի պարգեւեց յարութեան յոյսը եւ անմահութեան լոյսը:

Երբ Ան ըսաւ, «Ամէն բան կատարուեցաւ» կատարուած էր ամէն ինչ որ կը վերաբերէր մարդոց փրկութեան այս աշխարհի վրայ, սակայն որքան առանձն որ մնար գերեզման կարելի չէր հաւատալ ամէն բանին իրապէս կատարուած ըլլալուն: Պէտք էր Անոր դուրս գալ գերեզմանէն քակելով մահուան կաշտանքը, եթէ ոչ Անոր թաղուած մնալը նշանակ պիտի ըլլար մահուան յաղթանակին: Այս նպատակաւ Ան իջաւ Սանդարամբա (Եփեսոս: 4: 9. Գիլ. 2:10) գաւառ անգութ Իշխանաւորը իր որջին մէջ իսկ, բազմած իր գահուն վրայ մարդոց գանկերէն շինուած: Աշխարհի բոլոր հզօրները իրեն հպատակեցնող մահը գտած էր իր ախոյեանը յանձին Յիսուսի՝ որ խիզախ մուտք գործած էր իր թագաւորութենէն ներս, համարձակեւ էր մինչեւ իր զահը մօտենալ: Ո՞վ կրնար զպիլ մահուան եւ չմահանալ: Յիսուս մահուան գիւղով մօտեցաւ ոսկրաշէն պալատին ուր խնջոյրի նստած էր զժխեմ մահը: Ահեղ պայքարէ մը ետք մարդկային գեղին անպարտելի Ախոյեանը գետին տապալից շրէշը, եւ պարտուած թշնամեայն վրայ կոխած ազադակեց, «Ես եմ յարութիւնը եւ կեանքը, ան որ ինձի կը հաւատայ, թէեւ մեռնի պիտի ապրի:»

Ի տես այս մեծ յաղթութեան բոլոր դարերու սուրբերը կը բացագանչեն «Ո՛ւր է քու խայթոցդ ո՞վ մահ... մահը յաղթութեան մէջ ընկղմեցաւ:»

«Ես եմ առաջինը եւ վերջինը, ու ես ան եմ որ մեռալ եւ անա կենդանի եմ յաւիտեան յաւիտենից:»

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ

Խ. Թ. Ս.

Արթնութեան համար փափափ

(Շար. նախորդ թիւէն)

«Ժամը 10ին կրկին քարոզեցի 1600 հոգիներու, դասը, նստարաններուն անցքը լեցուն էր և մարդիկ ոտքի վրայ կը կենային ամէն տեղ: Հըրաշալի տեսարան մը կը պարզէր: Ժողովը տեւեց չորս ժամ: Կէսօրուան ճաշէն ետքը քնացայ, արթնցայ ճիշդ կէսօրէն ետքի ժողովի ատենը: 1400 հոգի ներկայ էր: Աստուծոյ հոգին երկիւղաշունչ կը շարժէր ունկնդիրներու վրայ, շատեր դէպի առաջ եկան փրկութեան ի խնդիր: Արցունքներ կ'իջնէին վար շատ մը այտերէն, մարդիկ կեցած կը սրբէին լուէն ուռեցած իրենց աչքերը: Շատ սրտեր փրկութիւն գտած էին: Երբ դարձի եկողներուն քովէն կ'անցնէի տեսայ թէ դէմքերին կը ճառագայթէր ուրախութենէն: Հոն կային շատ երիտասարդ այր մարդիկ և կիներ, նոյնպէս ալեւոր ծերունիներ ու քանի մը տղաք: Ամէնը փնտռելու շատեր գըտեր էին իրենց Փրկիչը: Ո՛հ, ինչ անսահման ուրախութիւն:

«Երկուշաբթի օրը ռուսական եկեղեցին էի, ո՛ւր գրեթէ հինգ տարի առաջ քարոզելի Աւետարանը: Հոն ժամը 10ին գտայ խռնուած սառնար ժողովուրդ մը: Ոմանք ծուած էին վերնայարկի քովնտի խցիկներէն դէպի բնմ, յետոյ նստարաններուն ետեւը մարդիկ ոտքի վրայ կայնած էին, մեծ երգչախումբ մը և նուագախումբ մը առջեւ կը կենային: Խօսեցայ «մեղքի վրայ յաղթութիւն» նիւթին վրայ համոզումով: Քսանեակ մը հոգիներ ծնրադրեցին: Սբ. Հոգին մուտք գործեց անոնց կեանքերէն ներս և հաստատեց փրկութեան գործը: Տէրը

հզօր կերպով կը գործէր. անոնցմէ շատերուն դէմքերը տառացիօրէն փառք հագած էին, այնքան մեծ էր անոնց ուրախութիւնը:

«Ռուսական ուրիշ քաղաքի մը մէջ մեր առաջին ժողովը տեղի ունեցաւ տեղական եկեղեցւոյն մէջ՝ որ կիսով միայն լեցուն էր, այսուամենայնիւ սրտերու կոտորուիլը սկսած էր ընդհուպ: Շատեր կ'աղօթէին հեծկըլտալով: Յաջորդ ժողովին եկեղեցին լեփլեցուն էր, ոտքի կայնողներով միասին: Մեր Յրգ ժողովը տեղի ունեցաւ ժողովարանի մը մէջ որ 3000 հոգի կ'առնէր: Այնքան մեծ էր բազմութիւնը և խորունկ՝ հետաքրքրութիւնը, որ շատեր ստիպուած էին զուրս մնալ: Հակառակ հսկայ բազմութեան, շատեր դէպի առաջ եկան ընդունելու Քրիստոսը: Յետոյ եկաւ Երկուշաբթի գիշերը: Արդեօք այն բազմութիւնը կրկին պիտի գայ: Այս հարցումը պատասխանեցաւ շուտով, որովհետեւ երբ հասաւ եկեղեցին տեսայ խռնուած մինչեւ ձեղնայարկը: Ո՛հ ինչ տեսարան: Երկու վերնայարկերէն ուշագիւրդ դէմքեր մեր վրայ կը նայէին: Երբ անոնց ուղղեցի աչքերս, ո՛հ, ինչպէս շարժեցաւ հոգիս ներսիդիս, ո՛հ, անոնք ինչպէս մտիկ կ'ընէին:

Ժողովէն ետքը առաջարկեցի ուրիշ ժողով մը: Հինգ հարիւրի չափ գացին, մնացածներով — 2500 Հոգի — ես շարունակեցի: Անմիջապէս առջեւի նստարանները լեցունեցան փրկութիւն փնտռողներով: Երբ ես կը բացատրէի փրկութեան ճամբան, արցունքներ կը հոսէին իրենց այտերէն և կ'իյնային իրենց ծունկերուն վրայ: Մեղքեր կը

ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾՍ Է

Քրիստոս Աստուածս է հոգւովս կը
պաշտեմ,

Ի խորոց սրտի՝ ես զայն կը գովեմ,
Քրիստոս հոգւոյս տաճարն է՝ խնկելի,
Սրբորդութիւնն է ինձ սուրբ, պաշտելի:

Քրիստոս հայր է՝ գթած, ողորմած
Անյիւշաւար է՝ քաղիչ յանցանաց.
Քրիստոս Տէրն է՝ երկնի ու երկրի,
Արքունակալը շնորհաց գահի:

խոստովանուէին և Քրիստոսս կուտար
թողութիւն անոնց, յետոյ կը մատու-
ցուէր գովութիւն Աստուծոյ Ինչ փո-
փոխութիւն կար դէմքերուն վրայ,
աչքերը կը փայլէին ուրախութենէն,
կը վկայէին պատմելով իրենց փրկ-
ուած ըլլալը:

«Այսպէս վերջացաւ, ամենէն հը-
րաշալի շարքը այս արթնութեան ժո-
ղովներուն զորս երբեք կատարած ըլ-
լած այլուր Ամերիկա նման փորձա-
ռութիւն երբեք չունեցայ: Ես չեմ
կրնար մոռնալ այդ փառաւոր տեսա-
րանները, որոնց ակունստեսը եղայ:
Ինչ անթութիւն և ծարու Աստուծոյ
համար: Երանի թէ Գանատայի մէջ ալ
կրկնուէր միեւնոյնը՝ Ո՛հ, ինչպէս կը
գովեմ զինքը՝ Ուսէյին, Յինիյին,
Մուտիյին և Իվան Բօպըրթզին Աստ-
ուածը մերն ալ է յաւիտեանս յաւիտե-
նից: Ան տակաւին Արթնութեան Աստ-
ուածն է: Իր ձեռքը չէ կարճացած, ոչ
ալ տկանջը ծանրացած: Ան կը պա-
տասխանէ աղօթքը, ալելուիա:

(Վերջը յաջորդով)

Քրիստոս սէր է եւ օրհնեալ Թագաւոր
Աւսարհի Տէրն է, հեզ եւ անաւոր:

Քրիստոս լոյս է, մոլորեալ մարդկու-
թեան

Անեկբայ յոյսը՝ կենաց յաւիտեան:

Քրիստոս Արեւ է, հոգւոյ եւ մարմնի
Զրի շնորհ է, համայն աւսարհի.
Քրիստոս կեանք է, ոհ, մեռած հոգիի,
եւ վառած կրակ է, քմրած սառ սրտի:

Քրիստոս հացըն է երկինքէն իջած,
Կենաց ջուր անոր՝ որ է ծառաւած.
Քրիստոս վեմ մ'է կանգնած մեր սրտին,
Նա կը հաստատէ մեր մոլոր հոգին:

Քրիստոս Հովիւ է քաջ եւ անձնուրաց,
Մեզ կ'առաջնորդէ փառախին կենաց,
Քրիստոս ճանապարհ է՝ ճամարութեան,
Ուղիղ առաջնորդ՝ փառաց յաւիտեան:

Քրիստոս մեզ կուտայ Իր խաղաղութիւն,
Ոչ քէ աւսարհի սին զուարճութիւն.
Քրիստոս կը ներէ յոյժ, մեղաւորին,
Միակ Փրկիչն է, համայն սաւսարհին:

Քրիստոս յալթեցժանց, նենգ Սաղայելին,
եւ լայն բացաւ մեզի դուռն երկնային.
Քրիստոս բազմած է, Բարձրելոյն կող-
մէն,
Բայց Իր ընտրածն է, հեզ, խոնարհ հոգին:

Քրիստոս մեր սրտին դուռը կը բախէ,
Անհուն սիրով մեզ իրեն կը կ'անչէ.
Փութանք ուրեմն, եղբայրներ, բոյրեր,
Քրիստոսի բանալ մեր սրտին դռներ:

Արտով խոնարհինք, մեր խաչեալ Փրկի-
չին,
Որ անվախ կ'անգնինք ասեանքն վերջին:

Բոյր ՓԱՌԱՆՁԵՄ

Աղեքսանդրիա

2Է ԱՍՏ ՔԱՆՁԻ ՅԱՐԵԱԻ

Քսան դարեր առաջ լուսապայծառ առաւօտ մը Յիսուս Քրիստոս գերեզմանին ու մահուան կապերը քանդելով յարութիւն առաւ։ Գերեզմանը՝ որ ամենատխուր վայրն էր աշխարհիս մէջ, Անոր փառաւոր յարութեամբը դարձաւ անմահութեան և յոյսի վայր մը։ Երբ Անոր յարութեան ցնծալից աւետիսը համայն մարդկութեան ականջներուն հնչեց, մարդկային բոլոր վաղնջական գաղափարները վեր ի վայր շրջեցան։

Յարութեան օրը Քրիստոնեայ աշխարհի համար ամենակարեւորներէն մին է, քանզի Քրիստոսէ առաջ աշխարհը մահուան դատերազմայր մը եղած էր։ Սակայն Ան, անյագ գերեզմանին և անպարտելի մահուան սահմանները իջնելով քանդեց անոնց միջնորբերը, և անմահութեան արեւուն ճառագայթները փայլեցուց մեղապարտ աշխարհին վրայ։

Քրիստոսի յարութեան ստուգութիւնը հասկնալու համար պէտք է կարդալ Ա. Կոր. 15րդ գլուխը, մասնաւորաբար անոր առաջին մասը, ուր մեծ առաքեալը, նախ և առաջ այս դէպքին ստուգութիւնը ի յայտ կը բերէ, և կը ցուցնէ թէ՝ Յիսուսի յարութիւնը հաստատուն եղելութիւն մըն է, թէ՝ Քրիստոս, որ գիրքերու ըսածին համեմատ թաղուելու և յարութիւն առնելու էր, մեռաւ, թաղուեցաւ և երրորդ օրը յարութիւն առաւ։

Անհաւատները ինչպէս պիտի կըրնան բացատրել այս եղելութիւնը։ Յիսուս մեռելներէն յարութիւն կ'առնէ ու կ'երեւի Պետրոսին, այսինքն խաչելութենէն քիչ առաջ զինքը ու-

րացող աշակերտին, և ետքը կ'երեւի տաան և երկուքին Յովհաննէս կ'երթայ գերեզման և զայն պարապ կը գտնէ, կը հասկնայ թէ Փառաց Տէրը յարութիւն առած է, մեկներ է անկէ, և այնքան դիւրութեամբ մը և այնքան բնական կերպով մը սահեր ու անցիր է իր պատանքներուն մէջէն որ անոնք իրենց բնական ծաղիքերով մնացեր էին գերեզմանին մէջ։

Պօղոս կը յիշէ թէ Յիսուս իր յարութենէն յետոյ հինգ հարիւրէն աւելի եղբայրներուն երեւցաւ, յետոյ ան կը յայտնէ թէ Յիսուս իրեն ալ երեւցաւ, և այս մեծ դէպքով խանդավառուած կը բացատրէ։ «Մահը յաղթութեան մէջ ընկղմեցաւ՝ ո՛ր է ով մահ, քու խայթոցդ, ո՛ր է ով գերեզման, քու յաղթութիւնդ»։

Քրիստոսի յարութիւնը Քրիստոնէական կրօնի անկիւնաքարը կոչուած է։ Եթէ Ան յարութիւն չառնէր, Անոր մահը մեր հաւատքին ալ մահը պիտի ըլլար, և Անոր գերեզմանը՝ մեր յոյսերուն գերեզմանը։

Անոր յարութեանը մեծագոյն փաստն է մեր մեղքերուն համար եղած իր մահը։ Նա մեր մեղքերուն համար, մեր արդարացման համար Աստուծոյ առջեւ, յարութիւն առաւ։ Մեղքերուն համար մեռնելը իր յարութեամբը փաստեց։ Եթէ Անիկա յարութիւն չառնէր մենք մեր մեղքերուն մէջ կորսուած թշուառականներ պիտի ըլլայինք։ Սակայն իր յարութեամբը մահն ու գերեզմանը յաղթեց, և մեզի շնորհեց յաւիտեանական կեանք մը։ Աստուածային ոյժ մը միայն կրնար յաղթել մահը։

Համայն մարդկութեան այս հզօր ու անողոք թշնամին վերջապէս յաղթուեցաւ Յիսուսի յարութեամբը։ Ալ մահ չկայ Քրիս-

տոսի հաւատացողներուն համար, քան զի Նո ըստ. «Ան որ ինծի կը հաւատայ թէ և մեռնի, պիտի ապրի»:

Անոր յարութեամբն էր որ ի յայտ եկաւ թէ մահէն ու գերեզմանէն անդին գոյութիւն ունի ուրիշ աշխարհ մը: Յիսուս անկից եկած է և հիմա ալ հոն է: Անոր յարութեան շնորհիւ է որ Անոր երկրորդ գալստեան մեր մարմիններն ալ յարութիւն պիտի առնեն, որով պիտի ապրինք յաւիտեան Տիրոջ հետ այնտեղ որ մեզի համար պատրաստուած է: Իր երկինք մեկնումէն առաջ իր աշակերտները քովը կանչելով անոնց մխիթարական խօսքեր խօսեցաւ և ըստ. «Իմ հօրատունը շատ բնակարաններ կան, ապա թէ ոչ ես ձեզի պիտի ըսէի, հիմա կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ...»: Զկարծենք մեր սահմանափակ տեսութեամբ թէ՛ այս է կեանքի միակ բնակարանը: Հազար անգամ ոչ: Մեր տպագայ բնակարանը ստուերային, ստորերկրեայ տեղի մը մէջ չէ, ինչպէս տգէտ և անլոյս հիթանոս աշխարհը կը կարծէր, ոչ ալ մութ գերեզմանին մէջ ուր հոգին կը փակուի, ու կը կնքուի անգիտակից քունին մէջ, ինչպէս հիթանոս փիլիսոփաները կը կարծէին:

Քրիստոս մեզի համար պատրաստած է տեղ մը որ է լուսապայծառ և կենսալիր:


Արդ, ով դուք որ ձեր սիրելիներէն զատուած էք մահումը, այլեւ մի լաք: Յիսուսի յարութեամբ, կը վստահեցնեմ ձեզ թէ, անոնք յաւիտեան կենդանի են: «Զի Նո մահը խափանեց և ի լոյս հանեց կեանքն ու անմահութիւնը»: Սիրելիներդ գերեզմանը չեն, անոնք երկինք փոխադրուած են: Բացէ՛ք ձեր հոգւոյն աչքերը և Մարիամի նման Յարութեան Փրկիչը տեսէք:

Քու սիրելիներդ փափկագեղ մարմինները յարութեան օրը, շուշանինը ման գեղափայլ պայծառութեամբ նորոգուած երկնաւոր մարմիններով յարութիւն պիտի առնեն: Ուրեմն գերեզմանը յաւիտեանկան բնակարան մը չէ, հապա առժամեայ ննջարան մըն է: Մահը ոչնչութիւն չէ՝ հապա յոյս, քանզի Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Ուրեմն եկէ՛ք ո՛վ հաւատացեալք, հանգչեցուցէ՛ք ձեր յոգնած հոգիները յարուցեալ Քրիստոսի հաւատարիմ խոստմունքներուն վրայ մինչև Նո երկրորդ անգամ երեւնայ: Եւ դուք ով մեղաւորք, դարձէ՛ք այս խաւար աշխարհի ոչնչութենէն, տուէ՛ք ձեր հոգիները Անոր որ ձեր փրկութեան համար մեռաւ ու յարութիւն առաւ:

(Վեր.) Թէ՛ՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

ՄԱՐԻԱՄԻՆ ՔՈՒԷՃԸ



Երբ աւետարանիչ մը ժողովներ կ'ընէր, կ'որոշէր դոճի դուռ այցելութիւններու սկսիլ: Տան մը մէջ պառաւ մը դէմը կ'ելլէ. երբ կը խօսի իրեն եւ զինքը ժողովի կը հրաւիրէ, դառնալով կ'ըսէ աւետարանչին. «Ինչո՞ւ փոխեմ մը չես երթար եւ արհեստի մը չես հետեւիր:» «Ո՞հ, կը պատասխանէ փառքիչը, ես գացած եմ Մարիամին Քուէճը»: Պառաւը շփոթած, «Ե՛հ, այդ սարօրեակ փոխեմ ո՞ւր կը գտնուի» կը հարցնէ:

Ճառագայթող դեմքով մը փառքիչը կը պատասխանէ. «Յիսուսի ոտներուն փոխը»:



ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿԱՅԻ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ



ՍԻՍԻԼԵԱՅԻ ՁԱՏԻԿԸ

Հայրիկ, անուշ չէ՞ անհաւատ մը
Ըլլա՞ր

Պր. Հովարտ սարսուռաց, խոժուե-
ցաւ, յետոյ ժպտեցաւ:

— Լաւ, ի՞նչ կը խորհիս Սիսիլ-
եաս, հայրիկդ անո՞ւշ է թէ ոչ:

Սիսիլեա հառաջեց, անշուշտ ա-
նուշ ես, սակայն հայրիկ, ինչո՞ւ աղ-
ջիկներ կը փսփոսն բառը, կարծես
թէ գող մը ըլլայիր, կամ անոր պէս
բան մը ի՞նչ կը նշանակէ անհաւատ
եա կը խորհէի որ անիկա մէկն է որ
փոյթ չ'ըներ եկեղեցի երթալ կամ կը-
րօնական բաներ սորվիլ: Սակայն այս
տեղ ամէն ոք կիրականօրեայ դպրոց և
եկեղեցի կը յաճախէ ի բաց առեալ
գինով Իրլանտացին:

Պր. Հովարտ նկատելով իր աղջը-
կան զգացած մտտաանջութիւնը. «Աղ-
ջիկս, աղաք քեզի հետ սիրով չե՞ն
վարուիր», հարցուց:

— Ո՛հ, շատ սիրով, սակայն...

— Այո՛, սակայն ի՞նչ, քաջալե-
րեց Հովարտ:

— Անոնք ինծի համար կը ցաւին,
կարծես թէ գինով Իրլանտացիին աղ-
ջիկն ըլլայի, պառթկաց Սիսիլեա Ա-
նոնք չէին ուզեր որ գիտնամ այս բա-
նը, սակայն լսեցի որ էսթել կ'ըսէր
Լինսօրային, թի՛նչ ահաւոր բան է ան-
հաւատի մը աղջիկը ըլլալ, մենք շատ
շատ աղօթելու ենք անոնց համար և...
և...

— Եւ ի՞նչ տակաւին, պնդեց Պր.
Հովարտ:

— Անոնք ըսին թէ հաւանական է
որ մայրս քրիստոնեայ մըն էր և ա-
ղօթող մը ինծի համար: Ես իրենց ը-
սեր էի թէ մայրս մեռած էր երբ ես
երախտայ մըն էի:

Տխրութիւն մը համակեց Պ. Հո-
վարտին դէմքը, այս տխրութիւնը
միշտ կը համակէր զինքը երբ Սիսիլ-
եային մօր յիշատակութիւնը ըլ-
լա՞ր:

Սիսիլեա չէր սիրեր տխուր տես-
նել զինքը, անոր համար հազուադէ-
պօրէն կը յիշէր իր վաղուց մեռած մօրը
անունը:

— Այո, քու մայրդ քրիստոնեայ
մըն էր, պատասխանեց ան:

— Եւ... և կ'աղօթէր ինծի համար,
հարցուց Սիսիլեան:

— Կը հաւատամ թէ կ'աղօթէր,
ըսաւ հայրը:

— Ի՞նչ կ'ըսէր հայրիկ, դուն կը
լսէիր, խնդրեմ աշխատէ՛ յիշել:

Աշխատի՛լ յիշել, երբ իր կնոջ
վերջին խօսքերը երբեք չ'մոռցուելու
աստիճան իր ուղեղը կ'այրէին: Դան-
դաղօրէն Պր. Հովարտ կրկնեց, «Տէր,
չնորհէ իմ... (ան չխօսեցաւ աղօթքին
այն մասին վրայ որ իր անձին համար
էր) փոքրիկս ըլլայ քրիստոնեայ կին
մը: Աշխարհի մէջ իրեն բաժին ինկած
գործը կատարէ վեհ հոգիով մը և վախ-
ճանին՝ դայ ու միանայ ինծի՝ երկինքի
մէջ»:

Իր հօրը ձայնին մէջէն ի յայտ եկած էր այնպիսի մեծ ցաւ մը որ Սիւսիւեան փաթթուելով անոր վզին հըծեց, չնորհակալ եւ հայր, յիշելուդ համար զայն, շատ գեղեցիկ աղօթք մըն է անիկա» և դուրս վազեց թողլով հայրը իր խոկուններուն մէջ։ Մինչ այն Սիւսիւեան որոշած էր բանի մը ուղեւ կանգ չառնել մինչեւ որ գտնէր կերպը երկինք երթալու ինչպէս որ իր մայրը փափաքեր էր։

Իր պզտիկութենէն Սիւսիւեան ապրած էր աշխարհիկ միջավայրի և մարդոց մէջ։ Քանի մը անգամ գացած էր կաթողիկէ եկեղեցի մը և միայն անգամ մը բողոքական եկեղեցի մը։ Նա գիտէր որ եկեղեցի գացողներ կ'աղօթեն, սակայն չէր գիտեր թէ որով և ինչով կ'աղօթեն։

Այս գարնան, իր արուեստագէտ հայրը եկած էր այս գիւղը որ զինքը հրապուրած էր և հոս էր որ ինչպէս Սիւսիւեան կ'ըսէր ամէն ոք կ'. դպրոց և եկեղեցի կը յաճախէր բացի զինով կաթողիկէ Իրլանտացիէն։

Աղջիկներ սիրով իրենց մէջ ընդունեցին Սիւսիւեան և հրաւիրեցին զինքը կ'. դպրոցի, սակայն նա քաղաքավարօրէն մերժեց հրաւերը։ Ետքը նա սկսաւ լըջօրէն խորհիլ այդ մասին։

Իր հօրը հետ ունեցած խօսակցութենէն ասդին Սիւսիւեան շատ մը տեղեկութիւններ քաղած էր Աստուծոյ, երկինքի և Սբ. Գիրքի վրայ։ Նա այժմ գիտէր թէ իր մայրը ի՞նչ բաներու կը հաւատար, այնպէս որ օր մը ըսաւ. «Հայրիկ Գրիստոնէաներ կը հաւատան թէ Աստուծոյ մը կայ, շատ բարի Աստուծոյ մը, որ Իր միտքին Որդին Յիսուսը տուաւ մեռնելու, որպէսզի երբ Անոր հաւատաւոր ասկէ շատ աւելի լաւ աշխարհի մը մէջ ապրինք։ Անոնք կ'ըսեն որ Սբ. Գիրքը Աստուծոյ գիրքն է, որ կը խօսի մեզի թէ ինչպէս պէտք

է ապրինք։ Մայրս կը հաւատար անոր։ Դուն ինչի՞ կը հաւատաս հայրիկ։ Կարծեմ թէ Ժամանակ է ինծի որոշելու թէ մօրս պէս Գրիստոնէայ պէտք է ըլլամ թէ ոչ քեզի պէս անհաւատ, դուն այդպէս չե՞ս խորհիր։

Պր. Հովարտ ցնցուեցաւ, սակայն անմիջապէս չպատասխանեց։

— Ի՞նչ բանի կը հաւատաս հայրիկ, պնդեց Սիւսիւեան։

— Ոչինչ, պատասխանեց ան։

— Ոչինչ, բացառանչեց Սիւսիւեան, սակայն ի՞նչպէս ոչինչի կը հաւատայ մէկը։

— Սիւսիւեան, աղջիկս, ըսել կ'ուզեմ թէ չեմ գիտեր որ Աստուծոյ մը կայ, երկինք մը գոյութիւն ունի՞ թէ ո՛չ։

— Գիտնալու կերպը չկայ, հարցուց աղջիկը։

— Մեռնելէ զատ ուրիշ ճամբայ չեմ գիտեր, ըսաւ հայրը։

— Ես էսթեղին պիտի հարցնեմ, ըսաւ Սիւսիւեան։

Երբ Սիւսիւեան հասաւ էսթեղի տունը, տեսաւ որ նա Զատիկի հանդէսին համար գոց մը կը սորվէր։

— Սիւսիւեան, ըսաւ էսթեղի, տես որ գոցս չիտակ կ'արտասանե՞մ։ Սորովո՞ք կտորս 1 թես. Դ. գլուխին վերջին մասն է։

— Իւրաքանչիւր բառն իսկ լաւ սորված էք էսթեղի, սակայն ի՞նչ կը նշանակեն այս համարները, հարցուց Սիւսիւեան։

Անոնք կը խօսին յարութեան մասին, գիտես որ Զատիկը Յիսուսի յարութեան յիշատակութիւնն է։

— Ո՛չ չեմ գիտեր։ Զատիկին կարմիր հաւկիթներ կ'ըլլան, գիտցածս այսչափ է միայն, ըսաւ Սիւսիւեան։

— Ան կը նշանակէ թէ՛ պատասխանեց էսթեղի, Յիսուս քու անուշիկ մայրիկդ գերեզմանէն դուրս պիտի

հանէ, այն փառաւոր յարութեան օրը երբ իրենները յառնեն գերեզմաններէն: Քու մօրդ հոգին այժմ երկինքն է, յարութեան օրը, անիկա վերստին պիտի միանայ գեղեցիկ մարմնի մը հետ, որը երբեք չի մեռնիր այլեւս:

Սիսիլեա հիացումով մտիկ կ'ընէր յարութեան պատմութիւնը, անիկա բոլորովին նոր էր իրեն համար: Այն Յիսուսը օր մը կրկին պիտի գար, կըրնայ ըլլալ շատ տարիներ չանցած, ըլլալու Թագաւորը այս աշխարհի, պիտի բերէր իր մայրն ու միասին, ո՛հ չհաւատալու աստիճան գեղեցիկ բան մըն էր ասիկա:

— Ո՛հ էսթել, կը յուսամ թէ այս բոլորը ճշմարիտ են, մինչեւ իսկ յոյսը կ'ուրախացնէ զիս: Ահա թէ ինչո՞ւ իմ հայրս միշտ տխուր է մօրս համար, այնպէս չէ՞: Ան կը արտմի «ինչպէս ուրիշները որոնք յոյս չունին» Սբ. Գիրքին ըսածին պէս: Էսթել կերպ մը կ'ո՞յ մէկու մը համար չի մեռած գիտնալու այս բաները: Արդեօք իրա՞ն է որ Աստուած մը կայ, և այս գիրքը ճշմարիտ է և ուրիշ բաներ:

— Անշուշտ Սիսիլեա, եթէ փնտռես պիտի գտնես թէ ստոյգ են անոնք:

— Ամէն ինչ ընելու յօժար եմ էսթել, ամէն ինչ:

— Երթանք սենեակս և ողորթենք, ըսաւ էսթել: Կարճ ատենուան մէջ Սիսիլեա վստահօրէն գտաւ թէ Աստուած կայ թէպէտ զԱյն չի կրնար տեսնել և զգաց թէ Յարութեան զօրութեան գրաւը կը թրթռացներ իր հոգին ու մարմինը:

* * *

— Ճիշդ թուութանական խնդիր մը լուծելու կը նմանի հայրիկ, ըսաւ Սիսիլիա, եթէ պատասխան մը ստանալ կը փափաքիս: Գիրքին օրէնքներուն պէտք է հետեւիս: Երբ ես ըրի այն բանը զոր Սբ. Գիրքը կը պահանջէր



... Այս փառնչն ալ բեզի մեր սիրովը:

ինձմէ, Աստուած զգացնել տուաւ իր զօրութիւնը:

Ջատիկ տաւօտուէն կանուխ, աւելի քան շաբաթ մը վերջը Սիսիլեա կրկին այցելեց էսթելին: «Անուշիկս, ըսաւ, կարծես թէ դու մը անցած է քեզ վերջին անգամ տեսնելիս ի վեր: Հայրս զիս գերեզմանատուն տարաւ, այցելելու մօրս գերեզմանը, առաջին անգամ է որ կ'այցելէր զայն: Եւ էսթել ծնրադրեց և խօսեցաւ քիչ մը ինծի և քիչ մըն ալ Յիսուսի. ան կուլար: Սակայն երբ կայնեցաւ արջունքներուն միջեւէն ան կը մպտէր: Յետոյ ինծի ըսաւ, «Սիսիլիա, ես ալ գտայ թէ ամէն ինչ ստոյգ է»: Հայրիկս շատ մը ծաղիկներ գնեց մօրս համար, այս փունջն ալ զրկեց քեզի մեր սիրով միասին: — Ան վաղը Ջատիկ պաշտամունքին պիտի երթայ էսթել, ո՛հ հայրս անուշիկ չէ՞:

Թարգմ. Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

ԶԱՏԿԻ ԱՌԹԻԻ

ԿԱՐՃ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԱՐԲԵՐ ՏԱՊԱՆԱԴԻՐ

Երբ անցնինք գերեզմանասան մը մեջէն եւ նայինք տապանաբերուն, կը տեսնենք թէ ամենուն վրայ գրուած է, «Աստուածային», խօսքը, եւ յետոյ անոր ներքեւ գրուած հանգուցելոյն անունը, մահուան թուականը երբեմն ալ գովեստի քանի մը խօսքեր: Սակայն որքան տարբեր է Յիսուսի գերեզմանին վրայ գրուածը: Անիկա ոսկի տառերով գրուած չէ, ոչ ալ քանդակուած: Անիկա հրեշտակի մը բերնով ըսուած է, որ միւսներուն վրայ գրուածին կատարելապէս ներհակն է. — «Զէ Աստուած, քանզի Յարեալ:»



ԹԱՂՈՒԱԾ ԶԵ ԱՅԼ ՍԵՐՄԱՆՈՒԱԾ

Մը. Մուսի ըսած է, «Ես կը սիրեմ յարութեան ժամանակի վրայ խորհրդածել, երբ մեռելները պիտի յարեն իրենց գերեզմաններէն: Թաղումի ատեն մենք կը կարդանք 1 Կոր. ԺԵ.ին մէկ մասը: Դժբախտ արեւոյտըստինք մըն է «Թաղման Արարողութիւն», խօսքը: Առաքելը երբեք չխօսեցաւ թաղման արարողութեան վրայ այլ սերմանելու: Ան ըսաւ, «Մարմինը կը սերմանուի ապականութիւնով, անարդարութիւնով, սկարութիւնով եւ շեշտուած մարմին: Եթէ ես ափ մը ցորեն թաղեմ արդիւնք մը չեմ ապահովել, սակայն երբ սերմանեմ, կ'ապահովեմ: Փա՛նք Աստուծոյ մեր հաւատարմեան բարեկամները թաղուած չեն այլ միայն սերմանուած»:



Եւ թաղուեցաւ ու յարութիւն տուաւ երրորդ օրը:

ՏԱՐԻՆԵՐ ԵՏՔԸ...

Զիլի մեջ անապատ տեղ մը կայ, ուր երեսուն տարի է Վերանորոգուած չէր. յետոյ եկաւ եւ երեք օր անդադար: Անորեւի դադարման վաղորդային կանաչութիւն մը գլուխը ցցեց, երկրորդ օրը աւելի առատօրէն իսկ շաքարուած վերջը՝ ամեն կողմ զմուխտային մարգագետնի մը վերածուած էր անապատ: Ի՛նչ գեղեցիկ օրինակ է մեռելներու յարութեան: Կենդանի եւ անապատ կանաչու սերմը 30 տարի է Վերանորոգուած էր:

ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ճարտարապետական յատկագրին է՝ որուն վրայ Աստուած կը կանգնէ իր կենդանի ՏԱՃԱՐԸ:



ՍՓԻՐՃԸՆ

ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՆՇԱՆՆԵՐԸ

«Ու երբ այս բաները սկսին ըլլալու...» Ղուկ. 21:28

Անգլիոյ 1938-1939ի ծովային պիւտնէն կը հաւասարի 123,707,000 ըսթէրլինի Նաւատորմի անձնական կազմն է 119,000 հոգի:

Սպանիական պատերազմը Ապահով հաշիւներու համաձայն հազարաւորներ սպաննուած և հազարաւորներ վիրաւորուած են: Աշխարհի վրայ չի տեսնուած վայրագութիւնը կը տեսնուի հոն որ 20 երորդ դարու քաղաքակիրթ երկիրներէն մին է, ծնողք իրենց զաւակները կը մեղցնեն և զաւակներ իրենց ծնողները: 22 տարեկան կիներէն բաղկացեալ բանակ մը ինչպէս կը կոչուի «Սպանիոյ վագր կիներ», ասոնք են համայնավորներու բանակը և կը մասնակցին կռիւի ու կը կռուին գազանօրէն, կը յարձակին աւելի մեծահարուստներու, կղերներու և եկեղեցիներուն վրայ: Այժմ Սպանիան կը նմանի դժոխքի մը:

1938ին մէջ կը գտնուինք, 1938ը մեզի ձգեց ծ գազանների որոնք մեզի դէմ իրենց տկուաները կը կրճտեն. նացիականութիւնը, համայնավորութիւնը և ֆաշիականութիւնը, և չենք գիտեր թէ 1939ը ինչ պիտի բերէ:

Գերմանական թիւրթ մը կը գրէ. «Հրեաները մեր դժբախտութեան պատճար եղած են»:

Նացի հեթանոսութիւնը սկսեալ է Գերմանիոյ մէջ «Գերմանական Հաւատքի Շարժում» անունով: Հոն հաւիւրաւոր Աւետարանական քարոզիչներ բանտարկուած են Հիթլերի հրամանով: Վերնէջմիւլլըր բանտարկուած

է պարզապէս, «Քրիստոսն է, ճամբան, ճշմարտութիւնը և կեանքը», ըսելուն համար: Ըստ Նացի կրօնքի պէտք էր Քրիստոսինը Հիթլերին շնորհել: Կերակուէն առաջ Հիթլերին մասնաւոր ազօթք մը կ'ուղղէն ըսելով որ անոր շնորհիւ է որ կը վայելեն ամէն բարիք: Հոն նորածինները Նացի կրօնքին համեմատ անոնց մասնաւոր կղերներով և իրենց յատուկ ծէսերով ու արարողութիւններով Հիթլերին անունով կը մկրտեն: Նացի մկրտութիւնը առաջին անգամ ըլլալով կատարուած է Քօլցեց անունով քաղաք մը, որ Լայպչիկի մօտ է: Մկրտութիւնը կը կատարուի մոմավառութիւնով և կղերին կողմէ Նացի երգեցողութեամբ:

Սթալին ըսած է. «Երբ Աստուծոյ մօտին կը խորհիս, կը մօտենա յեղափոխութիւնն ու համայնավորութիւնը: Ան որ անաստուածէ ճշմարիտ յեղափոխական մը և համայնավոր մըն է:

ՔՐԻՍՏՈՒԷԱԿԱՆ ՈՒՐԱՆՈՒԹԻՒՆ

Հենրի Պիչըր ըսած է. «Կան մարդիկ որոնք կը կարծեն թէ սեւ է երկինքի գոյնը, եւ դիմբերին որքան նրմանցնեն կէս գիւղերն այնքան աւելի մեծ են որոնք մը ապացոյցը կը նկատեն: Սակայն Աստուած՝ որ շինեց Արեւն ու ծաղիկները, զիս չղրկեց խօսելու այդպիսի սուտ մը: Մեզի ըսուած է որ միշտ ուրախ ըլլանք Տերոջմով»:

* * *

«Սուրբ ըլլալ եւ ուրախ չըլլալ հակասութիւն մըն է»:

* * *

«Հաւատք այն մեքաղաքն է որ կը զօդէ քեզ շնորհի, որուն վրայէն շնորհի կուգայ հոսելով Աստուծու»:

ԶԱՐԲԱՆԱԼԻ ԿԵՐՊՈՎ ՍՏԵՂՇՈՒԱԾ

ՄԱՐ Դ Ր

Մարդկային մարմնի մէջ 263 ոսկորներ կան մօտաւորապէս 600 դէնդերներ: Սննդարական խողովակը ունի մօտ 32 ոտք երկայնութիւն: Արեւոյն քանակը չափահաս մարդուն քով 30 լիդր է, կամ մարմնոյն մարդ ծանրութեան մէկ հինգերորդը:

Սիրտը կէս ոտք երկայնութիւն և չորս մատնաչափ տրամագիծ ունի, և կը բարախէ մէկ վայրկեանի մէջ 70 անգամ, ժամական 4200 անգամ, իսկ մէկ տարուան մէջ 36,792,000 անգամ: Իւրաքանչիւր զարկին $2\frac{1}{2}$ ունկի արիւն կը հրէ, մէկ վայրկեանի մէջ 175 ունկի, ժամուան մը մէջ 656 լիդր արիւն, որ հաւասար է տարեկան հօթը տակառաջափի, երէկ վայրկեանի մէջ մարմնոյն մէջ գտնուող մարդ ծանրութեան կ'անցնի սրտէն: Սոյն փոքր անդամը իր անդադար աշխատանքին մէջ վատնած ոյժը հաւասար է վերցնելու 121 տակառաջափ ծանրութիւն մը՝ մէկ ոտք բարձրութեամբ:

Միջին հաշուով կը չնչենք 1200 անգամ ժամական, ներս առնելով 100 գալոն օդ, մէկ օրուան մէջ 2400 գալոն: Օդին խառնչները թոքին մէջ քով քովի 12 քառ. ոտք սենեակի մը տարածութիւնը ունին:

Ուղեղին միջին ծանրութիւնը այդ մարդուն համար երէք լիդր երկու ունկի է, իսկ կնկան համար 2 լիդր 12 ունկի: Բոլոր ջիւղերը կապուած են այս ուղեղին ուղղակի կամ ողնածուծի ճամբով: Այս ջիւղերը՝ իրենց խոշոր և մանր ճիւղաւորումնե-

րով 10 միլիոնէն աւելի կը հաշուին: Միջնորոտային ճնշումը՝ խզտաքանչիւր քառ. մատնաչափ մարմնոյն վերայ 14 լիդր է, միջակ հասակով մարդուն մը վրայ մարդկային ճնշումը 40 հազար լիդր է:

Ամէն քառ. մատնաչափ մօրթին վրայ 3500 քրտինքի ծակեր կան $\frac{1}{4}$ մատնաչափ երկայնութեամբ պզտիկ խողովակներու նման, որոնք երբ իրարու քով բերուին, մարմնոյն երեսին վրայ խողովակներուն երկայնութիւնը կ'ըլլայ 201,166 ոտք, մօտ քառասուն մղոն:

«Տէր, կը գոհանամ քեզմէ որ ահաւոր ու զարմանալի կերպով ստեղծուեցայ զարմանալի են քու գործքերդ, ու իմ անձս աղեկ գիտէ» (Սաղմ. 139,14):

ԱՍՏՈՒԱԾ ԽՆՉ Կ'ԸՆԷ ՄԵՐ ՄԵՂԲԵՐԸ

Տարիներ առաջ աղեկ մը՝ երկու քրիստոնեաներուն իրարու հետ խօսակցութիւնը մտիկ ըրած տան, լըսած էր Աստուծոյ՝ իր ժողովուրդին մեղքերը ջնջելու խոստումը, և չուարած: Երբ տուն կուգայ կը հարցնէ իր մօրը թէ. «Ինչ կ'ըլլայ մեր մեղքերը երբ Աստուծոյ ներքէ մեզի»:

«Ինչո՞ւ աղաս կը պատասխանէ մայրը, կրնաս ըսել ինձի թէ ի՞նչ եղան այն թուանշանները, որոնք քարեալաւորակիդ վրան էին»:

— Ամէնը սրբեցի և լուացի, մայրիկ:

— Եւ ո՞ւր են հիմա անոնք:

— Անոնք տեղ մըն ալ չեն գտնուիր:

— Ճիշդ այդպէս կ'ընէ Աստուծոյ մեր մեղքերն ալ, երբ՝ ճշմարիտ ապաշխարութեամբ և հաւատքով ապաշխարենք և հաւատանք Յիսուս Քրիստոսի Աստուծոյ խոստումը այն է որչափոնք պիտի ջնջէ և ա՛լ պիտի չի՛չէ»:

ՀԱՐՅՈՒՄ

ՊԱՏԱՄՈՒՆ

Ա. հարցում. — Պէ՞տք է որ ներենք
այնպիսիներուն, որոնք մեզի դէմ կը
մեղանչեն և սովորյալ զղջում չեն յայտ-
ներ :

Պատասխան. — Այս հարցումը, ան-
կասկած, հիմնուած է (Ղուկ. 17: 3, 4)
համարներուն վրայ, ուր կը կարդանք.
«Եթէ եղբայրդ քեզի դէմ մեղանչէ
յանդիմանէ զանիկա, ու եթէ ապաշ-
խարէ, ներէ անոր: Եւ եթէ օրը եօթն
անգամ քեզի դէմ մեղանչէ, ու օրը
եօթն անգամ դառնայ քեզի ու ըսէ,
կ'ապաշխարեմ, ներես անոր»: Այս հա-
մարները ներելու և չնքնելու խնդ-
րոյն՝ լիակատար լուծում չեն տար:
Հոս մեր Տէրը կը պատուիրէ մեզի
ներել այնպիսիներուն, որոնք կը մե-
ղանչեն մեզի դէմ և ըրածնին վրայ
զղջում կը յայտնեն: Այս համարները
սակայն, չեն ըսեր մեզի թէ ինչ դիրք
բռնել պէտք է այնպիսիներուն, ո-
րոնք կը մեղանչեն բայց զղջում չեն
յայտներ: Մենք ներողի դիրք պէտք
է բռնենք ոչ թէ միայն զղջում յայտ-
նողներուն հանդէպ. այլ այդ զղջումը
յայտնողներուն հանդէպ ալ:

Յիսուս աղօթեց իր անդիղջ ըս-
պանի: Ներուն համար և ըսաւ. «Հայր,
թողութիւն տուր անոնց, վասն զի չեն
գիտեր ինչ կ'ընեն»: Նոյնպէս մեր Տէ-
րը պատուիրեց և ըսաւ. «Երբ աղօթ-
քի կը կայնիք, ներեցէք եթէ մէկուն
դէմ բռն մը ունիք...» (Մարկ. 11:
25, 26): Մարդիկ մեզմէ ներողութիւն
խնդրեն թէ ոչ, մենք պէտք է ներենք
անոնց, թէպէտեւ երկուստեք պէտք ե-
ղած քայլերը եթէ չառնուին խնդիրը
չտկուած չըլլար: Սակայն մեր կողմէն

ընելիքը որոշ է, ներողամիտ և հաշ-
տարար դիրք մը ունենալ, այսինքն՝
այնպիսիներուն հանդէպ բռնել Աստու-
ծոյ դիրքը. «Վասն զի Դուն, ով Տէր,
բարի ու ներող ես, և խիստ ողորմած
ամէնուն» (Սաղմ. 86: 5):

Բ. հարցում. — Ի՞նչ է (Յովհ. 3:
13)ին իմաստը:

Համարը այս է. «Մէկը երկինք
չելաւ, բայց անիկա միայն որ երկին-
քէն իջաւ, Որդին մարդոյ, որ երկինքն
է»: Իմաստը սա է. — Ոչ մէկը երկինք
ելած է տեսնելու համար թէ ինչ կայ
հոն, և սորվելով վերադարձած է եր-
կիր պատմելու համար տեսածները:
Կը հաստատէ որ ինքը ըրած է այդպէս
և հետեւորար հեղինակօրէն կրնայ խօ-
սիլ երկնային բաներու վրայ: Յետոյ,
Ան նաեւ կը յայտարարէ թէ ինքը տա-
կաւին երկինքն է: Ասիկա իր ամենու-
րեքութեան հաստատումն էր և հետե-
ւաբար իր աստուածութեան փաստ մը:

Երբ Յիսուս մեր Տէրը ունայնա-
ցուց իր անձը և մարդու կերպարանք
առաւ, թողլով իր փառքն ու պերճան-
քը զօրս ունէր Աստուծոյ հետ ի յու-
ւիտենից, Ան տակաւին Աստուած էր,
քանի որ Աստուած բոլորովին չէր կըր-
նար սահմանափակուիլ մարդկային
մարմնոյ մէջ: Այս աստուածային յատ-
կութեան արտայայտութիւնները մենք
կը տեսնենք իր երկրաւոր կեանքին և
գործունէութեան մէջ:

Աստուած սեղծած է ամէն ինչ
մարդոց համար, միայն մեր սիրքը ի-
րեն համար եւ մեր սիրքը չի հանգստա-
նար մինչեւ որ չհանգչի Աստուծոյ մէջ:

ՕԳՈՍՏԻՆՈՍ

ՊՈԺԱԼՄԸՆ ՄԵԶԱՐ

Էֆէնտիմիդին էմլութան գըյամը՝ էօլիւմ իւզէրինէ պէօյիւք պիր ֆիւթիւնաթ իտի։ Յագաթ պու ֆիւթիւնաթ պէլլութասս Գեթսէմանիտէն պաշլայարաթ թա խաշ իւզէրինտէ «Թէմամ օլտու» տէյիպ թէսլիմ ի բուէն էտէնէնէտէք միսլի սէպգաթ էթմէմիշ պիր ճէնկին նէթիճէսի իտի։ Շէյթան զալէպէ իւմիտիլէ պիւթիւն ճէնիմի գուզլէթլէրինի հարէքէթէ կէթիրիպ օնա հիւճմ էյիմիշ իտի։ Էլէմլէր հաֆթասը Էֆէնտիմիդին պու ազիմ հարպընըն մէնզարէսի տիր։ Օ զալիմ տիւշմէնլէրինին էլինէ թէսլիմ էտիլտի։ Նէհուտիլէրին հիճվի, պուզզ վէ տաւվէթի, վահշի բումալը ասքէրլէրին գումշը, տիքէն թոճ, մըզրագ վէ նէվանէվ հագարէթամիզ սէօզլէրի սէպէպինտէն։ Օ՝ ֆիզիքի աղըրլարաւէ բուհի էլէմլէրէ տիւշար օլտու։ Լաքին պուշլարըն ճիւմլէսինի էօյլէ սալիմ ու հալիմ պիր բուէն իլէ իսթիգալ էյլէտիքի տտէմլէրի հայրէթտէ պրագըյօր։ Թարիֆի նագապիլ պէօյլէ ֆիզիքի վէ բուհի էլէմլէր իշինտէ օլտուզընա բաղմէն, տահա տաճապի պու տըր քի վալիտէսինին միւսթագալէլինի տիւշիւնիւյօր, վէ խուսուսա տիւշմէնլէրինի սէվիյօր վէ անլէր իշիւն տուա էտիյօր իտի։

Ազ սօնրա, Էօրզընլըգ, ուշգուսըզլըգ չէթտիլի էլէմի վէ քէնտի գաւմընըն նանքէօր տմէլի օնու պիւթագաթ պրագաթ վէ օ թէսլիմի բուէն էթտի Պագընըգ իւհի օլտու պու Զաթա, պաշընը պիր թարաֆա էյմիշ, նուր սաշան սիմասը գոն վէ թիւքրիւքլէ միւլէմմա տրր։ Գալպ աթթըգ հարէքէթտէն տուրմըն Գոնլը տիւշմէնլէրի ճէնիմի գուզլէթլէր իլէ

պիլիթթիֆագ չալտըգլարը պու ֆիւթիւնաթտան սօլայը չազ ու մէսրուրօլույօրլար։ Էնճամ օնա զալիպ կէլիպ ինթիգամլարընը ալտըլար։ Քէնտիլէրի թագիր էտէն տիլի սիւքիւթէ հիւքմ էթտիլէր, տրթըգ պաշքեսինլէր, ֆէրիսիլէր վէ հէֆ թագալիլէրի բահաթ պիր Էիւրէք իլէ պայրամ էտէպիլիրլէր։ Պասեք գուզուսը պօղազլանտը վէ գոն պօլամտը ապտը։ «Վագաա իպնիւլ ինսան թագտիր օլուշտըղը իւզէրէ կիտէր, լաքին վա՛յ էլէ վէրիլմիսինէ սէպէպ օլտու տտէմէ» իքի գաթ վա՛յ Անըն գաթլինէ սէպէպ օլտու քիմսէլէրէ։ Իշթէ հայաթըն Ռէիսի էօլմիւշ, Արիմաթիւալը Յուսէֆ վէ Նիկոգիմոս օնու ինթիրամլէ տէֆն էտիյօրլար։ Լաքին հաֆթանըն իլք կիւնիւնին շաֆաղը աթար աթմագ էօլմիւշ Բապպ Էինէ տիրի տիր, մէգար պօշալմըն, պաշընըն մէնտիլի իլէ սարըլտըղը քէթէն պէզի տիւրիւլիւպ պիր թարաֆա գօնմըշ տըր։

Նէ զէման կէճէ կէլիր իսէ զէմին գարանլըղը լիպաս կիպի կէյեր, լաքին սապահլարըն անը սօյուշուպ կիւնտիւզիւն նուրընը կէյինիր։ Պուշըն կիպի, Բապպըմըղըն քէթէն պէզինէ արթըգ ինթիյաճը Էօգ իտի, Օ՝ միւճէլլա գըյամէթ էլպիտէսինի կէյմիշ իտի։ Յիսուս էօլիւլէրտէն գըյամ էթմիշ տիր, հալէլուհա։

1. Իմսի պիլգ Էօլմիւշ պիր Քրիստոս սեճսէ գրլմայօրուգ։ Յովսէֆին մէզարընտա տէֆն օլուշմըն ճէսէտին պիլգէ պիր Փաիտէսի վա՛ր մը։ Օ սէրթլէյմիշ գօլ պիլգիմ իշիւն նէ՞ Էագապիլիր։ Օ սօվուգ տուտագլար լէյհիմիդտէ նէ՞ սէօյլէյպիլիրլէր։ Տօնմըն տյագլար պիլգէ Փաիտէլի օլմագ իշիւն նէրէյէ՞ կիտէպիլիրլէր։ Սուսուսա հարէքէթտէն տուրմըն օլտու գալպ պիլգի նա՛սըլ սէվէպիլիր։ Օ՛հ, խայր, էօլմիւշ պիր քիմսէյէ իպատէթ էթմէյէ

մէծպուր տէյիլիզ, ճէսէտի հալի պիր մէզար իւզէրինտէ տիզ իւզէրի կէլ-մէմիզ մանասըզ տըր: Պիզ հայաթտա օլան Յիսուսըն սիմասընա սէյր է-տիյօրուզ: Օ հաշայօր, հիւքիւմիզի, էլէմլէրիմիզի թաշըմազ իշիւն, կէօզ-լէրիմիզտէն հաշլարը սիլմէք իշիւն, հաշայօր էօլմիւշլէրի հաշաթմազ ի-շիւն: «Պիլիրիմ քի պէնիմ վէլիմ հայ տըր» (Յոբ 19: 25):

Լաքին ատէմլէր պիր վազըթ տիրի օլանը էօլիւլէր տրասընտա տ-րասընգլարը կիպի շիմտի տախի էօյ-լէլէր վար: Լաքին հօգարտան կէլէն սէս տիյօր: «Տիրի օլանը էօլիւլէր տ-րասընտա նիշոնն արայօրսոռնուզ»:

Պասազըլար՝ Յիսուս՝ Պուստա վէ Գօնֆիկիոս կիպի պիրի իտի, օնու մէզարընտա տրամալը տէյօրլար: Բէ-սուլ տէյօր: «Էյիւր Քրիստոս գըյամ էթմէմիշ իսէ իմանըմըզ պաթըլ տըր... պիզտէ ատէմլէրին ճիւմլէսինտէն սէֆիլիզ»։ Էյէր Քրիստոս գըյամ էթ-մէտի իսէ հիշ քիմսէ մէզարտան տի-շարը կէլէճէյինի իւմիտ էտէմէզ, Ալ-լահըն քէլամը տէյօր: «Օ գըյամ էթ-տի»։ Իմտի «Ալլահ հագգ օլուպ հէր ատէմ հալանճը օլուռն» (Րօմ. 3: 4):

2. Աշըզ պիր մէզար: Քրիստոսըն գըյամըլէ մէզարըն գափուսը աշըզ պրագըլմըշ տըր: Բապպտա վէֆաթ էտէն սէվկիւլիւլէրիմիզի մէզարա էնտիրիր իքէն պէօյլէսի պիր միւ-թէլաա նէ՝ խօշ տըր: Մէզար արթըզ միւտհիշ վէ գարանլըք պիր գափը տէյիլ վէ էօլիւմ գօրգուլու պիր շէյ տէյիլ տիր: Մէզարը պիր մահպէս հալինտէ տախի կէօզէթմէյիզ, չիւնքի օնուռն տէմիրտէն գափըսը վէ սիւր-կիւսիւ հօգ տըր: Թաշ անըն իւզէ-րինտէն հուվարլանմըշ տըր, վէ քիմսէ թէքրար օ թաշը օրոյա գօյ-մատը: Հալլուռեա, մէզար աշըզ տըր, վէ պու աշըզլըգտոնն իսթիֆատէ էտէ-

րէք չօգ մուգատտէսլէր էֆէնտիմի-զին գըյամընտան սօնրա տիշարըյա կէլիպ չօգ քիմսէլէր իլէ կէօրիւշ-տիւլէր: Իշթէ ազ պիր գէման սօնրա պիւթիւն էօլիւլէր քէնտի մուվադ-գաթէն օլան մէսքէնլէրիտէն տիշա-րըյա կէլէճէքլէր:

Իմտի էօլիւմ քէնտի տիքէնինի զայպ էթմիշ տիր վէ մէզար քէնտի տէնշէթինի, չիւնքի մէզար՝ էպէտէյէթ գափըսը, էօլիւմ անճագ էվլատ Ուլ-լահը սէմաւաթա կէօթիւլէն կէմի տիր:

«Օ պուրատա տէյիլ տիր»։ Պիր գէման կէլիյօր քի պու սէօզ ճիւմլէ մուգատտէսլէր իշիւն տէնիլէճէք, «անլէր պուրատա տէյիլտիրլէր»։ Էյ պու սաթըրլարը օգույան, պէօյլէ պիր տիրի իւմիտէ մալիք միսին: Յիսուս Քրիստոսը չէնտիւն է իշլաս-քետր տէյի գապուլ էտիպ էօլիւ հայաթտան պուրատա իքէն, տիրի հայաթա կէշմիշ մի սին: Օ տէյօր: «Պէն հայաթտա իմ սիզ տախի հա-յաթտա օլաճագսընըզ» (Յոզհ. 14: 19):

3. Միւտհրիճ պիր ճէսէս: Էօլիւ-մէ միւպթէլա օլան պու ճէսէս գը-յամտան սօնրա միւճէլլա պիր ճէսէ-տէ թէպտիլ էտիլէճէք: Մէքթէպէ կի-տիպ կէլէն քիւշիւք պիր գըզ պիր կիւն մէքթէպտէն ուվտէթինտէ վա-լիտէսինէ սօրտու, «Վալիտէ սէմատա տախի պէօյլէ գանպուր մը գալաճա-ղըմ»։ Վալիտէսի սիւալտան միւթէէ-սիր օլտու, անը գուճագլարըզ էօփէ-րէք տէտի: «Սայր, սէվկիւլիւ գըզըմ սէմատա գանպուր եա պէլի պիւքիւք քիմսէ օլմայաճագ»:

Սահիհ, օրատա կէօզսիւզ, քէօթ-րիւմ, սագաթ եա սազըր քիմսէ պու-լուռմայաճագ: Գըյամէթ ճէսէտինտէ՝ պաշ աղըրըսը, րօմաթիզմ, գանսէր, վէրէմ, եա պիր կէօնէ խասթալըզ

իշխան եէր եօգ տրու Օրոն աիւշմէնին գուրչուսուս հա գըլըճը արթըգ էօլ-տիւրէմէգ: Օրոտա պօզուլմը չէհրէ-յէ րոտթ կէլմէգսին, չիւնքի օրոտա, «Պու էտնա ճէսէտիմիդի քէնտի միւ-չէրրէֆ ճէսէտիսէ պէնգէր օլմագ իւզրէ թէպտիլ էտէճէք տիր» (Փիւ-3, 21):

Շու ճէսէտ նէգուտար գտիֆ տիր, տըլըղա, սըճաղա, սօղուղա տալանա մագ, խաթթալըգ օնու փէրիչան է-տէր, սէնէլէր անը էսքիտիր: Ֆաթթ պուրտա պու էօլիւմիւ վէ գէվալ պուլուր օլան ճէսէտ՝ սէմաաա լա-յէմաթլըգ կէյիւճէք տիր, գտիֆ օ-լան գուվէթլի էանա օլան միւչէր-րէֆ օլաճագ: Պիր խաթթայա թէպտէ-լի հալա թաւսիյէ էտիլիր քի սըհ-հէթի իտտէ էտիլէ: էվլաա Ուլլահն

սըհհէթէ մալիք օլմալարը իշխան տա-խի պիր թէպտիլի հալա լաղըմ տըր, վէ օ իրտան ըրմաղընըն գարչը հա-գաաընա կէչմէքլէ տիլ: էֆէնտիմիդ օրոտա տուրույօր, պու ըրմաղը գօրգուսըգ կէչէլիմ, պիզի իսթիգ-պալ իւզրէ Օ վէ պիզտէն էվէլ կիտէն սէվկիւլիւլէրիմիդ պէքլէյօրլար: Եա-խօա ազ պիր վազրթ սօնրա սէմա-տան գուվէթլի պիր պօրու սէսի՝ Բապպուս ույուլմը օլանլարը սւյան-տըրաճագ, մէգարլար պօլալաճագ: Պիզիմ իշին տախի ատէմլէր տէյէ-ճէքլէր: «Օնլար պուրաաա տէյիլլէր»։ Պօչ մէղար իւշիւն Լիլլահա համա օլ-սուսն: Քրիստոս էօլիւլէտէն գըյամ էթմիլ տիր:

Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

ԱԼԹՈՒՆ ՈՒՓԱՂԸ

(2) Պաւլալարնա օղրու հիլմիյէք: Պու նէվ հիլմիլէթ տահա չէթին կէօ-րիւնէպիլիր, չիւնքի չօգ տէֆա պիզէ էօյլէ կէօրիւնիւր, կէօյա քի պաշ-գալար քէօթիւ պիր րուհտան թէչվիգ օլուսույօրլար: Ֆաթթ նիչէ նիչէ տէ-ֆալար քէօթիւ րուհ գանն էթտի-յիմիգ չէյ՝ խույ, զուրուր վէ սալը-սըղլըգ նէթիճէսի տիր: Անլէր՝ պանա պիր զիյան իրաա էտիյօրլար տէյի տա-լա տիւշիւնմէյէք քէնտի քէյֆլէրի տրգասընտան կիտիյօրլար: Իմտի նի-չոն օ խուսուսաա քէնտիմի պիհու-զուր էտէյիմ, էօյլէ պիր գէմանաա պէ-նիմ ետիսաճաղըմ չէյ ույանըգ պուլուս-մամ տըր:

Պաշգալարըն եօլու իւզէրինտէ տուրմա (էյէր իճրա էտիլմէսի լաղըմ օլան պիր վազիֆէ արգասընտա տէյիլ իսէն), վէ էյիլ սէնին կիթտիյին եօլ-տա պաշգալար սանա մանի իսէ, անլէ-

րի լէթաֆէթլէ եօլուլըն իւզէրինտէն րէֆ էթ, ֆաթթ անլէրէ պիր զիյան վէրմէ:

Ֆաթթիւնա ազալարըմըգ վէ տօսթ տէյի գանն էթտիյիմիգ քիմսէլէրէ գարչը թալր վէ հարէքթէմիդ՝ կիւճ-լիւք էօնիւնաէ մահալ վէրէն, միւթի օլան պիր թարաֆա չէքիլմէք, վազ կէչ մէք օլմալը տըր:

Պաշգալարա քէնտիլէրճէ տօղրու կէօրտիքլէրի չէյի ետիմաղա սուհու-լէթ վէրտիքճէ, քէնտի նազարլարըն-տա քէնտիլէրինի մուհիմ կէօրէն պու քիմսէլէրին տէրուսի հիսսիյաթլարըն-տա տահա կէնիչ մահալ պուլուրսըն, անլէրի քէնտի ֆիլիլլէրինտէ սէրպէսթ պրագտըգճա, անլէր իւշին տահա ֆա-խտէլի օլմագլըգ իմքանիլէթի վար տըր, վէ օ եօլ իլէ սէն քէնտի ֆիքրի րահաթընը պուլմը օլուրսըն:

Աճաիպ տիր քի, գափույու վուր-մագաղգ գալպլէրինի անլէր պիզէ նա-սըլ աշարլար:

«ՊԻՐ ԱՆՏԷ ՊԻՐ ԿԵՕԶ ԳՐՐՓՄԱՍՐԵՆՏԱ»

Պու սըրր Պողոս Բէսուլ թաւա-
ֆընտան իրհամիէ գալէմէ ալընմը
տըր Պիր կէօզ գըրփմասընտա, մէմու-
օլունմայան պիր կիւն վէ սաաթտա
պիր Եէյ վուգու պուլանագ: Բապպ
սէմասան նիգուլ էտիպ՝ Բիլիսէսինի
գարըլամագ իւզրէ հաւտա տուրա-
նագ: Բուհ իւլ Գուասըն անսըզըն
կէլմէսիլէ Բապպըն Բիլիսէսի մէյտա-
նա կէլտի Պէօյլէ տէ պիր կիւն անսը-
զըն, Բիլիսէ տիւնսա իւզէրինտէն
գալգամագտըր:

Պաշգալարըն ետիտըզը իշէրի
մուֆուսսուլէն թէֆթիշ էթմէյէ, եա-
խօտ նէ՝ սէպէպտէն օ նէվ ամէլլէրտէ
պուլունմը օլուգլարընըն մուճիպինի
անլամաղա չալըմա Էյէր օնլար
«Թաքթ» գուլլանմագտա թէքեսիւլ
էտէրլէր իսէ կէօրմէպտէն կէլ, վէ
տահա էյիսի, կէօյա ետիտըզլարը պիր
եանլըլըգ նէթիճէսի իտի տէյի տիւ-
շիւնմէյէ չալըն:

Պիր տիկէրինէ տօղրու նախօշ
պիր հիսսիյաթըմըզ վար իսէ օնուն
իշիւն էն էյի չարէ՝ հէր կիւն օ քիմսէ
իշիւն էյի պիր շէյ հափմաղա ճէհա
էթմէք տիր Սնլէրէն պիզէ տօղրու օ-
լան նախօշ հիսսինէ գարըն էն էյի չա-
րէ՝ անլէր հագգընտա հէր եէրտէ էյի
սէօյլէմէյէ չալըմագ տըր:

Էթրաֆընտա պուլունան քիմսէլէր
ետրամագ մը տըրլար, տիգգաթըլը
պուլուն, ֆագաթ գօրգմա, անլէրին
սանա պիր զիյան վէրմէսինէ Ալլահ
միւսաւատէ էթմէյէճէք տիր:

Իֆթիրա վէ լէքէնին նէթիճէլէ-
րինի մէն էթմէք Ալլահ իշիւն նէ՝
գատար գօլայ տըր:

Ալլահ՝ պէնիմ իլէ պաշգալարըն
վէ հալու քէյֆիյէթլէրին արասընա
կիրէն պիր գալգան տըր:

ԵՐԷՑ

Պիր կէօզ գըրփմասընտա ճիւմլէ
զաա'իֆիյէթ վէ քէտէրլէրիմիզտէն
գուլլունաճաղըզ: Պիր Ալլահ էվլա-
տը շիֆասինագապիլօլան պիր խա-
թալըգտան անսըզըն միւճէլլա պիր ճէ-
սէտ իլէ հաւտա լէֆ օլունաճագ:

Պիր կէօզ գըրփմասընտա ճիւմլէ
զէմինի շէյլէրիմիզի տըգատա պրա-
նաղըզ Չօզլար քէնտի խազինէլէրինի
եօգարտա ճէմ էթմէլի իքէն աշաղտա
ճէմ էտիյօրլար, իմտի օլ կիւնտէ վէ-
մինտէ պրագաղըմըզ շէյլիլին նէ գըլ-
մէթի գալըր շէյ նէյիմիզ վար իսէ
Անըն տըր վէ Անըն իսթէաիլի վագըթ
վէ մըգաարտա իսթիմալ էտիլմէլի:
Պիր կէօզ գըրփմասընտա Բապպա խըզ-
մէթ էթմէք, վէ Մէլիլի իւզիլ իշիւն
վէրիլէն հէֆ ֆուրսաթլար խիթմա
կէլէճէք, Իմտի վագթըմըզ վար իքէն
անը էպէտիյէթ իշիւն տգիլանէ իսթա-
մալ էտէլիմ:

Պիր կէօզ գըրփմասընտա պիզէ սէվ-
կիւլի ֆամիլիա աղալարըմըզ եա տօթ-
լարըմըզ արասընտան օնլար քի «Պի-
լէ աղլիմ խեկասը իհմալ էքսիլէր» է-
տիլէն իսթարլարա էնէմիյէթ վէր-
մէյիպ պէշարէթէ իթաթ էթմէտիլէր
տիլէր իլէ պիզիմ արամըգտա աճըլը
այրըլըզ մէյտանա կէլէճէք, իմտի ան-
լէրին խէլասը իշիւն տահա զիյատէ
կէլմիյէթ իլէ տուա էտէլիմ: Պիր կէօզ
գըրփմասընտա Բապպըմըզլէ պիւթիւն
ճէլալըլէ հաւտա կէօրիւշէճէյիզ, վէ
պիզտէն էվլէլ կիտէն սէվկիւլիլէրի-
միզլէ հաւտա պիրլէյիպ էպէտի մի-
սէրրէթ իլէ մէսըն օլաճաղըզ Սէվ-
կիւլի օգուլան, պու «Պիր կէօզ գըրփ-
մասընտա» քէլամընը ֆիքրինտէ հըֆզ
էյլէ, էլէր հաղըր իսէն սօն պօրու
չալընտըգտա պու տիւնեանըն էլէմին-
տէն գուլլունաղա էպէտի լահաթա
նաիլ օլուրսըն, իմտի վագթը սաթուն
ալ թալանթլարընը Անըն իշիւն գուլ-
լան: «Պիր կէօզ գըրփմասընտա» սէօ-
զիւնիւ տաիմա թէքէրրիւր էթ:

(Իճկ. Միւր.) Կ. Յ. ԹՈՒՄԱՆՆ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷ

Մտահոգիչ լուրեր կուգան միսիօ նարական դաշտերէ: Կ'ըսուի թէ Ճաբոնի մէջ Միթոտական Միսիօնարներ ձեռքակալուած և ինչքերնին գրաւուած են: Քորիայի մէջ այս հալածանքը կայ բոլոր յարանուանութեանց համար: Մկրտչականները մեծ շուարուամի մատնուած են քանի մը ամիսէ ի վեր, իրենց միսիօնարութեան ինչքերուն ամբողջական գրաւումին համար: Ճաբոնի իշխանութիւնները խոստացած են վերադարձնել զոնոնք, սակայն, կատարած չեն իրենց խոստումը: Կը տեղեկագրուի թէ 60 Մկրտչական եկեղեցիներ փակուած են Բումանիոյ մէջ՝ իշխանութեանց կողմէ:

* * Ամերիկեան թերթերու համաձայն, հալիւ Մարդէն Նիօմիլլերի եղբայրը Ուիլիէմ Նիօմիլլեր, յանդուգն քարոզ մը տուած է իր եղբօր պատկանող եկեղեցւոյն մէջ և ըսած է. «Որովհետեւ հակառակ սպառնացող պատերազմի մը՝ եկեղեցին կը քարոզէ հաւատքի դաւանութիւնը և ապաշխարութիւնը, իր աւջնորդները դաւաճանութեամբ ամբաստանուած են: Եւ որովհետեւ հովիւները ստիպուած զգացին, հակառակ հրեաներու դէմ հալածանքի, քարոզել որպէսզի Տանտարանեան պահուի, արգիլուեցան քարոզել և զըրկուեցան իրենց թոշակներէն: Եկեղեցւոյն ղեկավարներէն 4 հոգի Մարդէն Նիօմիլլերի հետ կեդրոնացման կայան կը գտնուին. ութը ուրիշներ ձեռքակալուած են, 130 հոգի պաշտօնանկ եղած են, 40 հատին արգիլուած է քարոզել և 11 հոգի աքսորուած են, և ասոնք Պէրլինի մէջ միայն»: Յետոյ յայտնած է թէ կառավարութիւնը կը հետապնդէ 1933էն ի վեր իր նպատակին հասնիլ որ է՝ պետութեան իշխանութեան ենթարկել եկեղեցին: «Սակայն, ըսած է, եկեղեցին ունի Աստուծոյ իշխանութիւնը և չկրնար հաստատել ե-

ղածը: Գերման ժողովուրդը՝ որ կը քալէ խաւարի մէջ, կ'սկսի տեսնել մեծ լոյսը: Գերման թողութեանութեան հոգեւոր միաբանութիւնը կրնայ միջոց մը ըլլալ փրկելու ժողովուրդը Հիթլերական կառավարութեան ճնշումէն:» Մենք կ'ողջունենք այս երկու հերոսաւոր պեղծարարները իրենց բռնած խիզախ գիրքին համար:

* * Համաձայն թերթի մը՝ ողբալի է Պաղեստինի Սիօնականներուն կրօնական վիճակը: Հոն կայ կ'ըսէ թերթը, կրօնական ամուլութիւն մը: Բողոքելով կը պահեն շարքով, հրաժարելով գործէն, Սբ. Գրոց ընթերցումը գոյութիւն չունի: Ձեւ մը ընդունուած է որով Աստուած վերցուած է համայնքային դաղթականութեանց մէջէն և տեղը դրուած է՝ «Գործ, հող, հաւատարմութիւն» բառերը: Ղեկավարներէն ոմանք կողմնակից են Շարքի տարողութեան առանց ճանչնալու զԱստուած: Ուրիշներ բոլորովին կը հակառակին ո՛րեւէ արարողութեան: Չափահասները կը յայտարարեն, «Մենք չենք կրնար սորվեցնել մեր աղայոց այն բաները որոնց մենք չենք հաւատար: Էմիք Քօլուցա սնունդով համայնքի մը մէջ (որովհետեւ հրեայ դաղթականները՝ Պաղեստինի մէջ զանազան համայնքներու բաժնուած են) երկար վիճաբանութենէ մը հետք որոշուեցաւ՝ որ երբ աղայ մը 13 տարեկանին հասնի, հմայեակներու վերաբերեալ որոշ համարներ բացատրուին իրեն և յանձնուին երեք բաներ. — Հ. Կտակարան, մանրանկար արօր և վեց հարուած հոն: Այս բաները հրէութեան նիւթական ձգտումը և հոգեւոր ամուլութիւնը երեւան կը հանեն: Անոնք կը ձգտին Պաղեստինը Աղգ. Օճախ մը դարձնելու:

ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆՆԵՐ

Տիկ. Ռ. Լեւոնեան Աղեքսանդրիայէն մէկ տարուան «Աւետարանի Զայն» կը նուիրէ Պր. Սարգիս Լալէհանին, Պէյրութ:

Քոյր մը 25 Եգ. զրշ. կը նուիրէ «Աւետարանի Զայն»ի ֆօնտին:

Խմբագրութիւնս իր շնորհակալութիւնները կը յայտնէ յարգելի նուիրատուներուն:

Յաջորդ թիւը պիտի յսկացուի «Մայրերու Օր»ուան եւ պիտի պարունակէ կարեւոր յօդուածներ ի մէջ այլոց «Մօր մը Սերը» յուզիչ պատմութիւնը եւ «Արցունքն ու Ժպիսք» հետաքրքրական յօդուածը, անպատեհ կարդացեմ:

ՍՏԱՅՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Պատանեկան Արձագանք» երկչաբաթաթիւրի Արտօնատէր՝ Կ. Գըվըրեան. Խմբագիր՝ Մ. Յ. Շնորհաքեան

c/o American press, Beirut.

«Պատգամաւոր» Հոգեւոր Ամսագիր Արտօնատէր Խմբագիր Ը. Ու. Քլէֆհամ. Փոստարկը թիւ 632, Երուսաղէմ:

ԹԵՐԹԻՍ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Եգիպտոս՝	25 Ե. դ.
Ամերիկա՝	1½ տղար
Ֆրանսա եւ Սիւրիա՝	30 Ֆրանկ

Նկատի ունենալով մեր հայրենակիցներէն ոմանց նիւթական անձուկ վիճակը, յօժար ենք այդպիսիներուն զեղչեալ գնով մը դրկիլ թերթը, եթէ առ այդ մեզի իմացնեն անձամբ կամ մեր գործակալին միջոցաւ:

Ուշադրութիւն. — Բոլոր դրամական առաւումներ, յօդուածներ եւ թղթակցութիւնք պէտք է հասցեագրուին հետեւեալ կերպով. —

K. T. SARIAN
2, Rue Ahmed Pacha Hasanen,
Shoubra, Cairo (Egypt).

PRINTED IN EGYPT BY
SAHAG MESROB PRESS,
25, SHARIA JEWFIK, CAIRO.